# Մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների, բողոքների 2020թ.-ի առաջին կիսամյակի ամփոփագիր

**2020**թ-ի առաջին կիսամյակի ընթացքում ստացվել է **381**դիմում:

**ա**/ Դրամական օգնություն է խնդրել **227** քաղաքացի: 216 քաղաքացու խնդրանք բավարավել է, 11-ինը մերժվել, 2020թ-ին արդեն իսկ օգնություն ստացած լինելու պատճառով:

**բ**/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է **45** քաղաքացի, որից 20-ի խնդրանքը բավարարվել է, 25-ինը՝ մերժվել, /Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

**գ**/ Առողջապահական բնույթի **17** դիմումից դրական պատասխան է ստացել 13-ը, 4 քաղաքացու դիմում մերժվել է:

/Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետ. պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով:

**դ**/ Աշխատանքի հարցերով դիմած **8** քաղաքացիներից 4-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 4 դիմում մերժվել է, /դիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով/:

**ե**/ Գյուղատնտեսական հարցերով դիմել են **12** քաղաքացի բոլորի խնդրանքն էլ բավարարվել է:

**զ**/ Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել է **18** քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

**է**/ հողաշինության հարցերով դիմած **16** քաղաքացիներից, 14 դիմումի տրվել է դրական պատասխան, 2 դիմում ընթացքի մեջ է:

**ը**/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է **18** քաղաքացի և ստացել դրական պատասխան:

**թ/** Այլ բնույթի **20** դիմում է ստացվել:

**ժ**/ Սեփականաշնորհման բնույթի դիմումներ ներկայացրած 5 քաղաքացիներին առաջարկվել է դիմել դատարան:

Փ. Ղազարյան

մարզպետարանի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ